



ԻՎԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՏԵՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ. ԹԻԻ 9

19 ՅՈՒՆՎԱՐ 1908

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Գրագէտներու եւ Արուեստագէտներու

Մոլորիւնները

Եղջերուին Երգը

Միլնոզաի Աշխարհաճայեցութիւնը

Բոլոնիական Գրականութեան Էջեր

Գիտերը.—Երգը

ԱՏԱՄ ՄԻՅՔԻԷՎԻԶ-Ի

Էսքիպոս

Ջուրերուն Մէջ

ՄՕՐԻՍ ԼԸՎԷԼ-Ի

Ժամ Սան եւ Միւսէ

Հայ Մամուլը Հանդէպ Մասիսի

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԳԵՂԱՆՈՅՇ ԳԱՎԱՅԵԱՆ

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

Ռ. ՍԵՒԱԿ

Ն. ԵԱԶԸՃԵԱՆ

ԿԷՈՐԿ ՊՐԱՆՏԷՍ

ԽՄԲ.

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳ.Բ. ՃԻՀԱՆ

1908



1885年

1885年

1885年

1885年

1885年

1885年

1885年

1885年

ՏՕՒԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

աղիքներու, միջային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին և նոր գաղիական արտերը: Այս վերջին արտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորադոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զօրեքարթի օրերը միայն ձրի:

Առէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար և երկար տարին ներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի,



Անկարելի է որ ընտանիք մը շառանգ կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅՐԱՅԻՆ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Զեռքի, ոսքի ու ոսքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդատաշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Մինկէրի Ընկերութեան վաճառատուններուն մէջ՝

ՇԱՐԲԱՆԿԱՆ ՄԱՍԻՍ

ԿԱՆԱԹԱՍ

ԲԵՐԱ

ՊԱՆԱՏԱՆ

ՍԵՐԵՍԱՐ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, 343 և 343.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.
1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.
1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ. 13. Զարչը Պօյու, Թ. 120.

Պատերը եւ նորոգութիւնները ձրի:

Կատարելաբար երաշխաւորուիւն:

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր բաղանջներուն մէջ

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

Ժ. ՍԻՄՕՆ.

Բարիկ

HYGIÈNE BEAUTÉ
CRÈME SIMON



Ք Ր Է Մ

Ս Ի Մ Օ Ն

Կիսեցինալ պահպանում
և առանց որ եւ է նարպակաւ խղի

Էտադոյն արտադրութիւնն է
ան պահպանելու համար ԴԷՄ-
ՔԻՆ ՈՒ ՉԵՌՔԵՐՈՒՆ
Ճերմակութիւնը

1900ին բարիկեան ոսկի շնորհով

Քրեմ Սիմոնը մօրթը կը պահպանէ օդին ազդեցութեան դէմ .
ճաթատ քներուն , կարմրութիւններուն և խորշակահարութեան
առաջքը կ'առնէ :

Եթէ վրայէն Սիմոնի քրեմափոշիի թեթեւ խաւ մը քսուի ,
դէմքի գոնին երիտաւարութեան չլացուցիչ փառ մը կ'ուայ :
Պէտք է տալն օր գործածել զայն , թաց լաթով մը մօրթին վրայ
տարածելով և յետոյ մեղմ չփումով մը ներս թափանցել տալով :
Ճարպային ոչ մէկ մօրթին չպարունակելով , ամբողջովին կը
լուծուի ջուրին մէջ :

ՄԻԱԿՆ Է Ս.Ն ՈՐ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԸՆԼԱՅ ԲՈՒՈՐ ԴԵՂԱՆԻ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ-
ՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ :

1860ին հնարուած , իսկապէս առողջապահիկ ու ամենաառաջ-
նակարգ Քրեմն է ուն աղտոտութեան : Բովանդակ աշխարհի մէջ
իր ունեցած յաջողութիւնը առաջ բերած է բազմաթիւ կեղծեր ,
որոնցմէ պէտք է խորշիլ ու խոյս տալ :

Քրեմ Սիմոնը , քրեմափոշի Սիմոնը և Սիմոնի
օճառը կը գանուին գեղարաններուն , անուշահոտու-
թեան վաճառատուններու և պրագարներու մէջ :

Գնած առէ՛ք պէ՛ք է լաւ ճշնել վաճառանիքը՝ որ պէ՛ք է, քան
եղի պոսկիբին նիստ նմանք ,





ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ՆՆՈՎՔ ԱՐՄԻՆ

ՃԵՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ ԹԻԻ 9

19 ՅՈՒՆՎԱՐ 1908

ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐՈՒ ՄՈԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գրագէտներու և մարդկային ազգին պատմութեան մէջ նշանաւոր դէմքերու խառնուածքը բնորոշող տկարութիւնները՝ միշտ հետաքրքրութեան առարկայ երեւոյթներ ևղած են, որոնցմով զբաղած է հետազայ սերունդը, բացառիկ շահագրգռութեան մը հաճոյքով: Այդ տկարութիւնները, քմահաճոյքները, ունակութիւնները, յաճախ ինքնաարագ ու արտաւայտ, լիովին մաս կազմած են մարդոց կեանքին, յանրաժան կերպով կապուած անոնց հոգիին ու մարմինին: Այդ մասնայատկութիւններէն՝ գրեթէ միշտ կը յայտնուի Նկարագիրը անձին, և կը յառնէ: Մարդը: Անոնցմով կը բնորոշուին նորերանգները հոգեկան հակումներու, խառնուածքի այլազանութիւններու, որոնցմով կը կազմուի և կ'ամբողջանայ հոգին որ և է անհատի: Անոնք մասնաւորապէս շահագրգռական են՝ հոգեբանական խաղարկութեան տնտկէտով, ուսումնասիրութեանը համար ձեռք առնուած անհատին միտքին: Այս ուղղութիւնով կարգ մը նշանաւոր դէմքերու վրայ անդլերէն Quaterly Review հանդէսը կը հրատարակէ հետեւեալ շահեկան ուսումնասիրութիւնը:

Հաղուստներու մասին չափազանց անհոգութիւնը ա՛յնչափ սովորական տկարութիւն մըն է, որչափ չափազանց չփեղղութիւնը: Եթէ պծնատէր անձիւր կան, կա՛ն նաեւ դիտումով գնչուի կերպարանք ստա-

յող մարդիկ ։ Ճօնարն , որ թերեւս հազուադէպ մասին աշխարհի ամէնէն անհող մարդն է եղած , սա խրատը կու տար . « Բաճկունիս կոճկեալ չղլտղինք , երբ մեր Տէրը մեզ կը կանչէ , այլ աւելի հողինիս ամրադնդենք . այն մարդը որ գորշ գլխատով չկրնար արքայութեան արժանանալ , անոր ճամբան չկրնար գտնել կապոյտ գլխատով ալ » ։ Հազուադէպ մասին անխուժութիւնը՝ կարծես աւելի իրաւաբաններու և մատենագիրներու տկարութիւնն է եղած միշտ ։ Բնականաբար հոս չենք յիշեր կենդանի անձեր , ինչպէս որ բաժնատոգներու ահուժի մը մէջ չեն խօսիր ներկայ եզոզ անձերու վրայ ։ Լօռտ Լընօքս ա՛յն տեսակ անխոյժ ձեւեր ունէր որ՝ մարդ կը զարմանայ թէ՛ ի՛նչպէս ձօրձ Գ . թագաւորը զինքը չէ յանդիմանած այդ մասին , ինչպէս որ Նորին Մեծութիւնը յանդիմանեց օր մը դատական մատենագիրը՝ իր լատինաբանութիւններուն համար , ըսելով . « Կը յուսամ թէ , սիրելի Լօռտ , մէկ կողմ կը դնէք ձեր անշնորհք լատինաբանութիւնը և կը հետեւիք ձեր քղանչելի իրաւագիտութեանը » , Եւ իրաւ , Լօռտ Լընօքսի իրաւագիտութիւնը արժանի էր այս գովեստին ։ Սակայն իր մէջ դատաւորն ալ իր տկարութիւնը ունէր , ինչպէս պետական մարդը ։ Իր կենսագիրին ըսածին համեմատ , Լօռտ Լընօքս անսահման վաստակութիւն ունէր պատմական օրէնքներու աղբիւրութեանը և անոնց պատճառած սարսափին վրայ ։ Արդարութիւնը խաղէութեան և անիրաւութեան դէմ պաշտպանելու նպատակով , յաճախ մահուան պատիժի կ'ենթարկէր յանցաւորները , իբր ամենատարակալի և հեռեւաբար ամենաօգտակար միջոց նկատելով այդ պատիժը՝ չարագործութիւններու առաջըր առնելու համար Բայց այդ վճիռը աւելի իր օրէնսդիտական հայեացքներէն բխող բան մըն էր , քան իր սիրտէն , որովհետեւ պէտք է ըսել որ՝ իր մէջ արդարութեան պաշտօնեան հրեք անգութ չէր , ինչպէս կը հաստատէ հետեւեալ միջադէպը . Անգամ մը , մահուան վճիռ արձակեց կնոջ մը՝ որ գողութեան մէջ բռնուած էր , և միեւնոյն ատեն յարեց թէ իր բարիքին համար կը միջնորդէ ։ Մանկամարդ կիներ դատավճիռին միայն առաջին մասը լսելով , ուշադրոյս գետին ինկաւ . պէտք էր տեսնել դժբաղդ դատաւորին յուզումը , չիտթութիւնը և աղաղակները . « Ո՛չ , ո՛չ , կը գոչէր ան , ես չեմ ուզեր որ կախին ձեզ . ըսէք անոր , յանուն Աստուծոյ , ըսէ՛ք թէ չպիտի կախուի , ես չեմ ուզեր որ կախուի » ։

Պճնասիրութեան կամ ուրիշ ճաշակներու չափ մեծ տկարութիւն մըն է նաեւ մեծ մարդոցմէ չատերութեան անուշի ցանկութիւնը ։ Սըր Ուիլիւմ Համիլտըն՝ իր կեանքին մէջ մեծ փառք մը թափեց « Պատենէթ » կոչուելու համար , յորջորջում՝ զոր անհրաժեշտ կը նկատէր իր համբաւին ու հանգստաւէտութեանը համար , բոլորովին մոռնալով որ՝ իր համբաւը փրկափայտութեան մէջ կը կայանար ։ Պէճքն և անկէ ետքը Ուոլթըր Սքոթ՝ նոյն տկարութեան օրինակները տուած են .

Կը կարծուի թէ՛ նշանաւոր մարդոց սովորական տկարութիւնները

հասարակ մարդոց ունակութիւններուն հետ շատ նմանութիւններ ունին։ Օրինակի համար, անուանի որկրամոլներու, խմողներու և ծխողներու ցանկը շատ երկար է։ Սակայն կան պարագաներ՝ ուր այս թերութիւններուն ազդեցութիւնն է եղած՝ տաղանդը և կօրովը գրգռել։ Այսպէս արտադրած են Էսփառնի Զրուցասրոյթիւնները և Շէրիաքընի ու կրտսեր Բիթի ատենաբանութիւններուն մեծ մասը։ Շիւլէրի մէկ քանի երգերը գինիին՝ ոգեւորութեան վրայ ունեցած ազդեցութեան՝ անհերքելի ազդեցոյցներ են, որովհետեւ կ'ըսուի թէ՝ այս բանաստեղծը սովորութիւն ունէր իրիկունները երկար ժամեր փակուիլ սենեակը՝ աշխատելու համար, բնկերութիւնովը եօժանկապուրկի քանի մը շիշերու։ Բայց այս սեպակին մէջ ամէնէն զարմանալի օրինակը վատահօրէն Պլէքսթընի կը պատգանի, որ իր Մեկնութիւնները Պորտօի գինին ազդեցութեամբ տակ գրեց։ Մարդ տեսակ մը պատկառանք կը դրայ այն զօրաւոր իմացականութեան նկատմամբ՝ որ ատակ է իրաւաբանութեան ամէնէն դժուար կէտերուն վրայ ա՛յդչափ յաջողութիւնով և ուղղախօսութիւնով գրել, առանց երբեք խմանութեան չօգիներէն պղտորուելու։ Եւ սակայն, Բազոսեան ատենաբաններու այս չարքը անդլիական պերճախօսութեան օսկեղարը կը կազմէ։ Մինչև վերջին ժամանակներս՝ մեծ արուեստագէտներ ծխոխոտի այնչափ մոլի չեն եղած, որչափ ոգեկլկններու, թէպէտ երեւելի ծխողներու թիւը բաւական մեծ է։ Ասոնց մէջ առաջին տեղը կը բռնէ Հոպս փիլիսոփան։ Բիւէի «Բէվլընտիշի Գերդաստանին Յիշատակներ»ուն մէջ նկարագրուած է թէ՛ ինչպէս կը սիրէր անցընել իր ժամանակը «Լէվիթան»ի հեղինակը։ Իր սահմանած առողջապահական կանոններուն համեմատ, առտուները կը յատկացնէր մարմնական մարզանքներու, իսկ կէս օրէ ետքերը՝ դրական զրազումներու։ Առտուն ելած-չեւած, զբօսնելու կ'երթար կամ շրջադայելու մօտակայ լեռան մը վրայ, կամ եթէ օդը գէշ ըլլար, տունը կը մնար և մարմնամարզական դժուար փորձեր կ'ընէր, մինչև որ քրտնաթաթախ կ'ըլլար։ Յետոյ աղէկ նախաճաշ մը կ'ընէր ու այցելութիւններու կ'երթար մինչև ճաշի ատենը։ Ճաշէն ետքը, կը քաշուէր առանձնասենեակը, ուր պատրաստ դրած կ'ըլլային քովը տասը-ասուերկու հատ ծուխ եւ հոն՝ դուռը փակելով՝ երկար ժամեր չարունակ կը ծխէր, կ'երազէր ու կը գրէր։

Շատ մատենագիրներ՝ առողջապահութեան վրայ խօսած ատեն՝ այն կարծիքը կը յայտնեն թէ՛ թէյը և սուրճը տւելի դեղեր են, քան ըմպելիներ։ Եւ սակայն, հազարաւոր մարդիկ՝ որոնք ծանօթ են իրենց մտաւորական արժանիքներով՝ մեծ ունակութիւններ ունեցած են այդ ըմպելիներուն համար։ Սըր ձէյմս Մաքքինտոշ [1] կ'ըսէր թէ մարդուս

[1] Տասնըութերորդ դարու երեւելի մատենագիր։

մտածողական կարողութիւններուն ուժը կ'աճի՝ խմած սուրճին քանակութեան համեմատ : Ամէնուն ծանօթ է թէ՛ Քուօրըր [1] ո՛րչափ կը սիրէր սուրճը , և թէ ի՞նչ եռանդով փառարանած է այս ըմպելին՝ իր բանաստեղծութիւններուն մէջ : Քրին համար , ինչպէս և Տանդէի , իրիկութեան ժամերը ամէնէն անուշ ժամերն էին : «Ահա հասաւ ժամանակը , արծարծենք վառարանին կրակը , գոցենք պատուհաններուն փեղկերը , քաշինք վարագոյրները և մօտեցնենք բազկաթուռները , թէյամանը ուժգին կ'եռայ և բոլորակ դոկորչի կ'արձակէ : արդէն պատրաստ է այն անուշ ըմպելին՝ որ կը զուարթացնէ , առանց գինովցնելու : Գաւաթները լեցուն են , բարձր էք եկած , իրիկուան հանդարտ ժամեր» : Անշնչաւ ա՛յսչափ իրարու ետեւէ կուլ տրուած թէյի զաւաթները չէին կրնար օգտակար ազդեցութիւն մը ունենալ դժբաղդ բանաստեղծին ջլգային դրութեանը վրայ , թէև անոր մտաւոր կարողութիւններուն խանգարումը ուրիշ տեսակ ունակութիւններու պէտք է վերագրել և Լօւս Պայրընի ամենամոմեզ մոլութիւնն էր սօճաի ջուրը , որով գրեթէ բաւական տոեւն ապրեցաւ , մէջը պղծսիմստ թրջելով : Բաշտանօթ է նաև թէ՛ վառվառն բանաստեղծը Պայրըն՝ ստատիկ կը սիրէր իր անձով տղաւորութիւն թողուլ հասարակութեան վրայ : Երբ Պայրըն «հասարակութեան առաջը կը դնէ իր արեւնաթաթախ սիրտը» , կը դգաս որ՝ անոր դիտաւորութիւնն է տղաւորութիւն մը ընել : Մաքօլէ իրաւունք ունի ըսելու թէ՛ մարդ մը որուն միտքը իրաւցնէ տոգորուած է իր նմաններուն արհամարհանքով , տարին չորս հատոր չհրատարակեր միայն այդ բանը անոնց ըսելու համար : Եւ երբ բանաստեղծը հպարտութիւնով կը յայտնէ թէ՛ որ և է մէկուն համակրութեանը պէտք կամ ակնկալութիւն չունի , կարելի չէ՛ հաւանիլ ատոր , որովհետեւ եթէ ատանկ ըլլար , ան ամբողջ Եւրոպայի չէր հաղորդեր՝ իր կնոջ տուած սրտաշարժ հրաժեշտը և իր զաւակներուն գլխուն տեղացած անէծքները : Այս կարգի մարդոց մէջ թերեւս առաջին տեղը կը շահի Ժ. Ժ. Ռուսօ , թէև Տիտօ ալ կրնայ յաջողապէս մրցիլ անոր հետ :

Ըզլինկ հետեւեալ տկարութիւնը կը յիշէ այն մեծ մարդուն վրայ , —այս անգամ ո՛չ-գրագէտ ըլլալով , —որ Նոր Աշխարհը գտած է : Քրիստափոր Գոլոմպոս առաջին անգամ աւետեալը երկիրը հետուէն նշմարելու տղայական փառասիրութիւնը ունեցաւ , ինչպէս որ ինք եղաւ իրաւցնէ առաջին անգամ անոր գոյնութիւնը գուշակողը : Սակայն այդ պատիւը իրմէ յափշտակեց հասարակ նաւաստի մը : Միայն թէ բնականաբար հանճարեղ ծովագնացին խօսքին վրայ ամէնքը հաստատեցին թէ ի՞նքն է եղած ցամաքը առաջին անգամ տեսնողը , իսկ միւս խեղճ մարդուն բոլոր բողոքները անլսելի մնացին : Կորսնցնելով այն մեծ

[1] Նշանաւոր անգլիացի բանաստեղծ և վիպագիր

վարձատրութիւնը՝ զոր յոյս ունէր ձեռք ձգելու , դժբաղդ մարդը խեղագորհցաւ : Անանկ որ , կ'ըսուի թէ , ուրանալով իր հայրենիքը ու հաւատքը , զնաց մտաւ Մաւրիտանացիներու ծառայութեան մէջ : Պէտք է հաւատալ թէ իր աղգակիցներուն ձեռքը չինկաւ , ապա թէ ոչ հաւատաքննութեան ատենը իր վրէժը կ'աւնէր անկէ : Բնականաբար այս պարագան Գոլոմպոսի պատիւ չի բերեր :

Ուրիշ շատ մեծ մարդիկ չեն ճանչցած իրենց հանճարը , որուն վրայ կը հիմնուէր իրենց բուն հաճառը , և ուրիշ աւելի ստորին արժանիքներու ետեւէ եղած են : Ասոնց մէջ կարելի է յիշել Ռոսինին , որ կը պարծենար թէ՛ կրնար սքանչելի մախառնի պատրաստել , զոր չափազանց կը սիրէր . ա'յնչափ կը սոնքար իր խոհարարական տաղանդին համար՝ որքան Կիյեռն Թեքի հեղինակութեան , այն անմահ գործը , որով ան փակեց իր երաժշտական ասպարէզը : Ռոսինիի տուած պատճառը՝ իր քառասունամիայ կատարեալ անգործութիւնը արդարացեալու համար՝ նման է այն պատճառին՝ որով Համիլդըն մեկնեց իր լուսթիւնը , փառաւոր ու եղակոն իր ատենաբանութիւններէն ետքը . «Նոր յաջողութիւն մը , կ'ըսէր ան , բան մը չաւելցներ իմ համբաւիս վրայ . իսկ անյաջողութիւն մը՝ կը խորտակէ համբաւս . առաջինին պէտք չունիմ . իսկ երկրորդին ալ չեմ ուզեր ենթարկուիլ» :

Ծանօթ է նոյնպէս այն հաւատքը՝ որով Կոլտսմիթ անգլիացի բանաստեղծը կը կարծէր թէ խոր հմտութիւն ունի բժշկութեան մէջ : Թերեւս այս մոլութիւնը եղած ըլլայ իր մահուանը պատճառ , որովհետեւ երբ հիւանդացաւ , ի'նք եղաւ իր բժիշկը :

Էօթէն Սիւ Փրանսացի վիպասանն ալ նոյնօրինակ զառանցանք մը ունէր , թէ եւ ո'չ բոլորովին անհիմն կերպով : Բարիզի Գաղսնիքներուն հեղինակը , զաւակը ըլլալով մեծանուն վիրաբուժի մը , ինքն ալ բժշկութիւնով զբաղած էր երիտասարդութեանը ատեն : Ծիծաղաշարժ միջոցէպ մը՝ որ կը պատմուի Էօթէն Սիւի վրայ , կը ցուցնէ թէ՛ ո'րչափ մեծ էր անոր բժշկական ճարտարութիւնը : Օր մը իր Ռօմէօ բարեկամին հետ սքանչելի ճաշ մըն էր ըրած Բարիզի ճաշարաններէն մէկուն մէջ , և մինչ երկուքն ալ՝ գլուխին տաքցուցած՝ կը զբօսնէին մայթերուն վրայ , Ռօմէօն անղգուշ քայլ մը առնելով ինկաւ և սրունքը վիրաւորեց : Այդ միջոցին կառք մը կ'անցնէր : Էօթէն Սիւ անոր մէջ դրաւ իր բարեկամը , տուն տարաւ , պառկեցուց , վէրքը կապեց և անոր մօտը թիկնաթուի մը վրայ նստաւ , գիշերը հսկելու համար : Սիւն օրը , կապը քակեց՝ վէրքը քննելու համար , բայց բան մը չգտաւ , որովհետեւ վիրաւորուած սրունքին տեղ ողջ սրունքը կապած էր :

Ինչ մարդիկ կան որ միեւնոյն ատեն բաղմամբիւ արուեստներումէջ առաջնակարգ հանգիստացած ըլլան . սակայն՝ կան քանի մը հաղուստ գիւտ դէմքեր՝ որոնք առաջնակարգ տաղանդի հետ՝ երկրորդական կա-

րեւոր արժանիք մըն ալ ունեցած են : Կը յիշուի , օրինակի համար , էնաորը Քրոնոսայի նշանաւոր նկարիչը , որ ա՛յնչափ կընար պարծիլ իր երաժշտական գործիքին համար , որչափ իր վրձինին : Ռեւոլյուսիոն համար կը յիշուի նոյնպէս թէ՛ այս հռչակաւոր նկարիչը քանի մը պատուիրակութիւններու գացած ըլլալով՝ կը պարծէր իր քաղաքական ընդունակութիւններուն վրայ : Այս պատճառով , անգամ մը տիկին մը կը հարցնէր Գաղանովային թէ՛ արդեօք այդ Ռեւոլյուսը՝ որուն վրայ ա՛յնչափ կը խօսին , դեռպահ մըն է՝ որ պատկերներ ստորագրելով կը զրազի : «Ո՛չ , Տիկին , պատասխանեց արուեստագէտը , նկարիչ մըն է ան՝ որ պատգամաւորական թուղթեր ստորագրելով կը զրազի» :

Ետտ անգամ , պատահած է որ , երեւելի բանաստեղծներ , հռչակաւոր գիրականներ , մեծ արուեստագէտներ , կարծած են որ՝ իրենց հանճարը կրնան փայլեցնել՝ անձնական ուրիշ տիպոսի մը սուս պսակով , ինչ որ յաճախ անոնց բուն փառքը նսեմացնելու միայն կը ծառայէ : Աշխարհ լիցուն է այն անսակ մեծ կամ փոքր արուեստի մարդոցով՝ որոնք յոռի գաղափար կազմած են իրենց իսկական արժանիքին վրայ , և որոնք իրենց ակար հակումները ցոյց տալով՝ կը կարծեն թէ զեղեցիկ կողմեր երեւան կը բերեն :

ՆՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՆԴԷՊ «ՄԱՍԻՍ»Ի

Տեղական մեր յորգելի պաշտօնակիցներէն ետքը , Իզմիրի **Արեալոյս** օրամերձը՝ **Մասիս**ի նուիրած է հետեւեալ գնահատական տողերը , զորս կ'արտատպենք շնորհակալութեան զգացումներով՝ իզմիրեան համակրելի թերթին :

«ՄԱՍԻՍ»Ի Ն ՇՈՒՐՋԸ

Ուրախութեամբ կը դիտենք որ **Մասիս** զրական շաբաթամերձը Պոլսահայ երիտասարդ հրատարակչիւր Ենովք Արմէնի խմբագրութեան տակ՝ հրատարակուելէն իվեր բոլորովին նորօրինակ յաջողութիւն մը ունեցաւ , որքան իր զրական հանգամանքին , նոյնքան ալ այն հրապուրիչ նորութիւններուն համար , որոնք **Մասիս** արդի խմբագրատեղին յատուկ են :

Առաջին շրջան մը կատարեալ յաջողութեամբ անցընելէ վերջ , Ենովք Արմէնի **Մասիս**ը թեւակոխած է արդէն իր երկրորդ տարեշրջանը , որուն յաջողութիւնն ալ յուսովից է բոլորովին , քանի որ Պոլսահայ և գաւառիկ անուանի զրագէտները բոլորուած են իբր աշխատակից , իր շուրջը :

Ենովք Արմէն , ժայռայեղօրէն նախանձախնդիր իր զրական գործը արժեցնելու , աննման կորովով մը փարած է **Մասիս**ին , որուն ամէն , մէկ թիւը մասնաւոր խնամքի մը զրոշմը կը կրէ , թէ՛ յօդուածներու ընտրութեան և թէ՛ տպագրական արժանիքներու անսակէտով :

Առանց այլեայլի , մեր արդի զրականութեան մէջ , միտկ լուսադոյն զրական շաբաթամերձն է Ենովք Արմէնի **Մասիս**ը , որ առանց պէտք ունենալու պրոֆեսոր ռեֆչալներու , անձայն , անշշուկ , ամբողջ ընթերցող հասարակութեան գնահատումին արժանացած է արդէն :

Անոնք որ զրականութեան սիրահար են , ամէնէն լուսադոյն ընտրութիւնը ըրած պիտի ըլլան ստանալով **Մասիս**ը :

ԵՂՋԵՐՈՒԻՆ ԵՐԳԸ *

Եղջերուիւ ըզհես լեռնէ լե՛ռ ինկար ,
Սիրոյ իրաւեալ դար ու փառ տնցա՛ր , . . .
Մեհառուացոյ շիրք ծայռե՛ր ծակեցին ,
Մեղունի կաթեցան աչկէն առիւծի՛ն . . .
Մերդ ու ցաւ ըզհեզ անմահացուցին ,
Վշտաց ու փառաց կոչեցեալ վեհ կին . . . :

Լեռնէ՛ լեռ ինկար եղջերուիւ ըզհես ,
Ու այզն արբընմար աչիւ լոյսին հես .
Մեղունին աչկերուդ ու այսիւ արիւն
Ծաղկանց բուլի՛ն եղան ոսկցն հեճերուն . . . :
Մերդ ու ցաւ ըզհեզ անմահացուցին ,
Վշտաց ու փառաց կոչեցեալ վեհ կին :

Եղջերուիւ ըզհես լեռնէ լե՛ռ ինկար ,
Ծունկերդ ա՛լ կըքոս , ա՛լ աչուիդ ճըկար ,
Պարուսեղ , եղա՛ւկ , հարցնես տնցորդին՝
«Եղջերու արդեօք ո՞ւր գընաց , ո՞ր դին» :
Մերդ ու ցաւ ըզհեզ անմահացուցին ,
Վշտաց ու փառաց կոչեցեալ վեհ կին :

Լեռնէ լեռ ինկար եղջերուիւ ըզհես .
Հեճերն համբուրես , այլ ինքն է անհե՛հ :
Կարծէ , խօ՛ղն , յաւէ՛ս՝ ետեւդ վազել .
Խօ՛ղ , յուսա եւ դու յաւէ՛ս գաշնգսնել .
Մերդ ու ցաւ ըզհեզ անմահացուցին ,
Վշտաց ու փառաց կոչեցեալ վեհ կին :

ԵՂԻՍ. ՏԷՄԻՐԱԽՈՍԵՍԱՆ

* Ամէն անգամ որ եղիւսէն քերթուածներ կը հրատարակենք , վնուկ զրազէտը սիրող-ներ՝ կը հարցնեն մեզի՝ հիւանդ բանաստեղծը Մառիսի մէջ զտնեւնուն զարմացիկ հաճոյքով . — «Անտի՞պ է» : — Բայց այո՛ , երբ Մառիս հիւանդ եղիւսին ալ աշխատակցութիւնը ձեռք բերելու պատիւը ունի :

Խմբ. Ծան.

ԲՈՒՆԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԷՋԵՐ

Գ Ի Շ Ե Ր Ը

Հովերուն շուրջը սակաւ կը զովանայ եւ օրումն ճամբիւնը կը մեղմանայ ու Ձա-
յր լեւան ուսերուն վրայ կ'իյնայ Տիեզերքի ջանք : Կը խորսակուի ու կը սարածուի
կրակէ երակներով ու կը մտնի . բախառական ուխտաւորը կը գլխէ չորս դին ու կ'ուն-
կնդրէ :

Տախաւ լեռները կը գործանան . հովիւներուն մէջ մո'ւր է զիւերը եւ առուակները
կը մեմնչեն կարծես երազի մը մէջէն , կապոյտ ծաղիկներու անկողինի մը վրայ : Օդը՝
բուրումներ կ'արձակէ եւ ծաղիկներուն երածեսուրքիւնը սիւսին զը խօսի . բարբառ
մը՝ որ ականչներու համար խորհու'ւրդ մըն է :

Լռութեան ու խաւարին քերտուն սակ կը քնանամ :

Յանկարծ օդերեւոյթի մը կայծկլտուն նշոյլները կ'արթնցնեն զիս ու ոսկեգոյն հեղեղ
մը կ'ողողէ երկինքը , երկիրը ու լեռները :

Ո՛վ Արեւելքի գիւշեր , հայուա՛նքիդ մէկ կայծովը կ'արթնցնես զիս նոր զգումներու
հրաւերով . . .

Ե Ր Պ

Հովերուն դէմ կ'արձակեմ ձիս ու անխնայ կը հարուածեմ : Ժայռերը , հովիւները ,
անտառները խմբովին իրարու ետեւէ կը սահին ոսկերուս սակէն եւ կը կորսուին հեղեղի
մը ալիքներուն նման : Խեցրեմա՛լ կ'ուզեմ ու արեւիկ ճեսարաններու այս յորձանգէն :

Ու երբ իմ փրփրեախ երթվարս ալ չի հնազանդիր կամիս , քո՛ղ աշխարհը գունա-
բափի վերջալոյսի դագաղին վրայ ու հրդեհաւոր աչկերուս մէջ՝ ինչպէս խորսակուած
հայելիի մը մէջ՝ քող անցնի՛ն ու աննեսանան ժայռերուն ու հովիւներուն ուրուա-
կանները :

Երկիրը կը մնչէ , բայց ես չեմ հանչեմա՛ր քունը . կը հետնալիմ ծով . սեւ ու ուռած
ալիք մը կոսրտուելով կը քաւալի դ՛ալի ծովափ . հակասս անոր կը հակի ու քեւեսս կը
պարզեմ :

Կոհակը կը փերտի գլխուս վրայ ու քոսը կը պատէ զիս . ու կը սպասեմ որ Միսս
յորձանգէ բռնուած նաւակի մը պէս՝ կորսուի ու ընկղմի վայրկեան մը Մոռացումին
խորը :

Ս.Ս.Ս.Մ ՄԻՅԻՒԷՎԻԶ-Ի *

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

* Բոլորն իացի հռչակաւոր հեղինակ՝ որ իր հուժկու տաղանդով և վառվռուն գործերով
մեծ համբաւի մըն է տիրացած : Իր անունը կը վայելէ տիեզերական հռչակ մը և իր գոր-
ծերը Թարգմանուած են եւրոպական բազմաթիւ լեզուներու : Խմբ. Ծան.

ԷՏԸԼՎԷՅՍ*

Պատիւ վրայ անխօսուկ , մունջ ,
Գամ մը մէջքիդ՝ կը մտածես,
Կը թօգունիս , կու լսու կարծես,
Էսըվէյսի ո՛վ վրտիս փունջ :

Թառամե՛ր եմ քերքերդ բոյս ,
Հիւծեր է ցո՛ղրդ սրտօրէն .
Ո՞ր դժբաղդ հո՛վը սարերէն
Քեզ հոս նետեց խայտախոր :

Ծաղիկներուդ գոգը վայրի
Ու քերքերուդ մէջ գալարուն,
Սնահա՛ս , հրպա՛րս բարձունքներուն
Հիւանդ կարօ՛սն է որ կ'այրի:

Ու կ'երագե՛ս դուն անհունն ,
Գամ մը մէջքիդ . ու կ'այրի
Գունաս բաւի՛ւրդ մոխիրի,
Էսըվէյսի ո՛վ նիսար վունջ:

Ռ. ՍԵՒԱԿ

* Մասիսի այս թիւով կը հրատարակենք «Ռ. Սեւակ»ի լայն զեղեցիկ բանաստեղծութիւնը: «Ռ. Սեւակ» հազիւ քանի մը քերթուածներ ստորագրած , արդէն գնահատական մատնադր հետաքրքրութիւն մը արթնցուցած է իր շուրջը և ընթերցողներէն շատեր կը հարցնեն մեզ թէ՛ ո՞վ կը պահուըտի այդ ստորագրութեան ետեւը: Չենք ուզեր քողամերկել «Ռ. Սեւակ»ը, քանի որ ինք զրական դիմակով մը կը սիրէ բանաստեղծել . բայց սա՛չափ մը գոհացնենք հետաքրքրութիւնը ընթերցողներուն թէ՛ ան Մասիսի ընթերցողներուն ծանօթ բանաստեղծ մըն է , որ Մասիսի միջոցով իր բուն անունովը յայտնուած ատեն ալ՝ անմիջապէս համակրութեան և գնահատութեան նշաններով ողջունուեցաւ ընթերցողներէն , ինչպէս զայն առաջին քերթուածէն գնահատող և ծանօթացնելու սիրող մը եղաւ խմբագրութիւնս :

Խմբ. Ծան.

ՄԲԻՆՈՂԱԻ ԱՇԽԱՐՀԱՆՅԵՑՈՒԹԻՒՆԸ

Բ.

Խիստ շահեկան է գիտնալ թէ՛ որոնք էին Սբինոզային ընաղանցութեան ազդեցութիւնները : Անտարակուսելի է թէ՛ Սբինոզայի գլխաւոր վարդապետութիւնները անհրաժեշտ զարգացումն էին Կարգեւեան գաղափարներու , փիլիսոփայական զարգացում որ սկսաւ Տէքարդով , Մալպարանշով և իր գաղաթնակէտը հասաւ Սբինոզայով : Ֆլայտէրէր կը յայտարարէ թէ՛ Սբինոզայի փիլիսոփայութիւնը որ Միապաշտութիւն և Կանխորոշութիւն կը վարդապետէ , հակապաշտութիւն է Տէքարդի փիլիսոփայութեան հետ , որ Կրկնապաշտութիւն և ոչ-Կանխորոշութիւն կը վարդապետէ և կը հետեցնէ թէ՛ Սբինոզայ Տէքարդէն միայն ձեւը , մտթեմաթիքական մեթոտը իւրացուցած է : Բայց որոշապէս կը տեսնուի թէ՛ Գոյակին յղացումը Տարածութեան և Խորհուրդի կրկնապաշտութիւնը , անկարելիութիւնը որ և է ներգործութեան Նիւթին ու Հոգիին միջեւ , Տէքարդինն էին , զորս Սբինոզայ իւրացուցած , այլախօսած ու շեշտած է : Տէքարդի cogito ergo sumը [կը խորհիմ ուրեմն կամ] Սբինոզայ իբր միայն մեկնակէտ առաւ , կազմելու համար ոչ թէ Տէքարդի պէս անհատ կրկնապաշտութիւն մը , այլ մաքուր միապաշտութիւն մը : Ահա թէ ինչո՞ւ Սբինոզայի քնաղանցութիւնը շատ ու շատ գեր ի վեր է Տէքարդինէն : Սբինոզայի յարաբերութիւնը Տէքարդի հետ յայտնորոշ է , բայց Տէքարդ միակ խորհուրդ է՝ որուն կապուած է : Փրէօսէնդալ աւելի առաջ կ'երթայ ու կ'ապացուցանէ թէ՛ Սբինոզայ վերջին դասականութեան ազդեցութիւնը կրած է , ազդեցութիւն՝ զոր Տէքարդ ինքն ալ կրեց : Բայց Շօէլի , Շարլշմիդի , Զիկվարդի , Ռ. Ավինաուիոսի և Պէօսմէրի հետ՝ պէտք է աւելի առաջ երթալ և ապացուցանել թէ՛ Սբինոզայի փիլիսոփայութիւնը ուղղակի կամ անուղղակի ազդեցութիւնը կրած է Քապալիսդներուն , Հրեա խորհողներու [Մայմոնիդէս , Կերասօնիդէս , Քրեսքաս] Արարա-Հրէական միտքիքականութեան [Ավերոս , Սքոթըն Էրիճինա , Մայսթէր Էքարդ] և այս հրէական ազդեցութիւններէն զատ նաև ազդեցութիւնը Ճիօրտանօ Պրիւնօի : Սբինոզայ իր բարոյագիտութեան մէջ կը ջանայ ապացուցանել թէ՛ իր վարդապետութիւնները օրինաւորապէս առաջ եկած են Տէքարդի սկզբունքներէն և միայն մէկ անգամ կ'ակնարկէ Հրեա փիլիսոփաներու իբր շատ մթին ու շատ անտրամաբանական նախատեսութիւն մը պարունակող իր վարդապետութիւններուն : Անշուշտ Հրեա փիլիսոփաներուն համաստեղածութիւնը ու բանապաշտութիւնը ազդեցութիւն ըրած են Սբինոզայի վրայ , իր խորհուրդները գունաւորուած են իր երբայական ծագումով և ուսումով , բան մը՝ որուն ինք զիտակից է եղած :

Այս զարգացումը զանազան փիլիսոփաներու խորհուրդներուն՝ տեղի ունեցաւ մտաւորական ամէնէն զանազան պարագաներուն տակ և առաջնորդեց զինքը կազմելու օրինաւորապէս՝ թերեւս ամէնէն կատարեալ դրութիւնը դրութիւններուն, զինքը խանդավառութեան առարկան ընելով Կէօթէի, Շէլլինկի, Նովալիսի, Հէկէլի և Շլաէրմախերի. Սքինոզա կեդրոնը եղաւ գերման իտէապաշտութեան և իր քնաղանցական դրութիւնը ամէնէն ազդեցիկը. ԺԹՐԴ դարուն՝ ան կրցաւ դուրս գալ զինքը չրջապատող սխալ հասկացողութենէն: Սքինոզա և Քանդ, երկու մեծ խորհողներ, եղան նոր սերունդներու մտաւորական գործունէութեան կեդրոնը, և արդէն՝ Շլաէրմախերի համար Սքինոզաին Աստուածը ու Քանդին «ding an sich»ը անհունին մէջ կը նոյնանան: Սքինոզաի մէջ կը գտնենք անոր միտքիք փիլիսոփայութեան սերմերը. Շէլլինկի մէջ ալ կը տեսնենք Սքինոզաի ազդեցութիւնը. Շէլլինկի համար բացարձակին փիլիսոփայութիւնը հիմնուած է միտքիքական խորիմի մը վրայ: Սքինոզաի հետ ան Բացարձակը Աստուած կը կոչէ:

Բայց Սքինոզաի մեծագոյն ազդեցութիւնը պէտք է փնտռել յեղաշրջումի [évolution] տեսութեան մէջ, որ Կէօթէով և Լամառքով սկսաւ և որ գիտական հաստատուն հիմեր ունեցաւ Սքէնոբրով, Տարվինով, Հէքէլով, Նովալիս «Ivresse de Dieu» կը կոչէ այն կապը՝ որ Կէօթէն ու Սքինոզան այնչափ սերտ կերպով միացուց: Սքինոզաի օրէնքը տիեզերքի գերագոյն օրէնքը նկատեց Կէօթէ և պէտք եղած նիւթերը հայթայթեց անոնց որոնք Լամառք, Սքէնոբր կամ Հէքէլ կոչուեցան: Սքինոզաի Միապաշտութիւնը և Կանխորոշութիւնն էին՝ որ Հէքէլը առաջնորդեցին իր խուզարկութիւններուն մէջ: Վարկած մը կրնայ յայտնուիլ ուրիշի մը, ինքն ալ իր կարգին démodé ըլլալով: Տարվինի վարդապետութեան մէջ կրնան հիմա աւելի նոր տեսութիւններ ներմուծուիլ. բայց ատոնք մանրամասնութիւններու տարբերութիւններ են, բոլորովին մասնակի: Յեղաշրջումի տիեզերական օրէնքը կայ, անփոփոխ ու բացարձակ:

Աս եղաւ Սքինոզաի դերը գիտական իմաստասիրութեան մէջ: Մինչ Տէքարդ արդի մաթեմատիքի հիմերը կը դնէր, Քանդ Միտքը և իր օրէնքները կ'ուսուսնասիրէր, Սքինոզաի ազդեցութիւնը ԺԹՐԴ դարուն մէջ անյեղլի օրէնքներ կը ստեղծէր: [վերջ]

ԳԵՂԱՆՈՅՇ ԳԱՎԱՅԵԱՆ

ՋՈՒՐԵՐՈՒՆ ՍԷՋ

Ռաւլընո տասը տարիէ իվեր միեւնոյն դրամատունին մէջ դրամա-հաւաքի օրինակելի պաշտօնեայ մըն էր : Երբեք անոր որ և է գիտողութիւն մը չէին ըրած . երբեք անոր հաշիւներուն մէջ սխալ մը չէին գտած : Միս-մինակը կ'ապրէր , խուսափելով նոր ծանօթներ ունենալէ , զբօսատեղիներ յաճախելէ . հոմանուհի ալ չունէր և երջանիկ կը դգար ինքզինքը այս կերպով : Եթէ իրեն մէկը ըսէր . «Մարդ փորձութեան կ'ենթարկուի ատանկ խոշոր գումարներ տեսնելով» . կը պատասխնէր պարզապէս . «Ինչո՞ւ : Քեզի չպատկանող դրամը դրամ չէ» : Իր արուարձանին մէջ ամէնէն արդարակորով մարդը նկատուած էր և ամէնէն նուրը խնդիրներուն իրաւագատը :

Պայմանաժամերու իրիկուն մը տուն չդարձաւ . Իր կողմէն գործադրուելիք յանցապարտ արարքի մը զաղափարը զինքը ճանչցողներուն միտքը չպղտորեց բնաւ : Ոճիւրի մը հաւանականութիւնը միայն կրնար պատճառ ըլլալ անոր : Ոստիկանութիւնը խուզարկութիւն մը կատարեց անոր գացած տեղերը : Ռաւլընո կանոնաւորապէս ներկայացուցած էր մուրհակները և գանձած էր վերջին գումարը՝ Մօնթրուսի մօտերը, իրիկուան ժամը եօթնին : Ամբողջ հաւաքած գումարը երկու հարիւր հազարէ աւելի կը հաշուուէր : Այդ տեղէն սկսելով անոր հետքը կորսնցուցած էին : Յետոյ նորէն սկսան ամէն բան խուզարկել . բերդերուն առջեւը քարածուած ընդարձակ պարսպ գետիններուն վրայ գտնուող ամէն մէկ անկիւն քննեցին , անոնց չուրջը գտնուող խարխուլ խրճիթները նայեցան : Ոչի՛նչ : Ապահովուելու համար՝ ամէն կողմ հեռագրեցին : Բայց դրամատունին անօրէնները ոստիկանութիւնը , սա եզրակացու-թեան յանգեցան թէ՛ անպատճառ աւաղակները անոր հետեւած , կողոպտած ու ետքէն ջուրը նետած էին զայն : Բարիզի մէջ մէկը միայն ուսերը կը թօթուէր լրագիրներուն մէջ այդ բաները կարդալով . այդ մարդը Ռաւլընոն էր : Այն վայրկեանին երբ ոստիկանութեան ամէնէն ճարպիկ պաշտօնեաները իր հետքը կորսնցուցած էին , ան Սէն գեաին մօտը հասած էր անճանաչ , անմարդաբնակ փողոցներէ անցնելով : Կամուրջի մը կամարին տակ ծպտուեցաւ քաղաքացիի հագուստներ հագնելով , զորս առջի իրիկուընէ տարած պահած էր հոն : Գրպանը դրաւ երկու հարիւր հազար ֆրանքը . դրամատունին համալգեստը և գլխարկը կապոց մը չինեց . խոշոր քար մը կապելով անոր՝ ջուրը նետեց եւ հանդարտօրէն Բարիզ վերադարձաւ : Պանդոկի մը մէջ գիշերը անցուց : Քանի մը ժամուան մէջ վաղեմի գող մը դարձած էր : Ժամանակ ունէր չոգեկաւք նստելու , սահմանադրուիւր անցնելու համար . սակայն ինք այնչափ ապուշ չէր կարծելու համար թէ՛ քանի մը մղոն հեռաւորութիւնը

կրնար զինքը զերծ պահել ոստիկանութենէն, և վստահ էր որ շատ շանցած պիտի ձերբակալուէր ։ Առտուանց երկու հարիւր հալար ֆրանքը պահարանի մը մէջ սահեցնելով նոտարի մը ներկայացաւ ։

— Պարոն, ըսաւ, ահաւասիկ այցելութեանս պատճառը ։ Այս պահարանին մէջ արժեթուղթեր ունիմ՝ զորս կ'ուզեմ ձեր քովը պահել ։ Երկար ճամբորդութիւն մը պիտի ընեմ, և չեմ գիտեր թէ երբ պիտի վերադառնամ ։ Ձեզ կը յանձնեմ այս ծրարը ։ Կարծեմ թէ ոչ մէկ բան կ'արգիլէ ձեզ առաջարկս ընդունելու ։

— Ոչինչ, Պարոն ։ Ստացագիր մը չինեմ ուրեմն ։ — Հաւանեցաւ ։ Յետոյ խորհեցաւ ։ Ստացագիր մը . ո՞ւր պիտի գտնէր դայն ։ Որո՞նք պիտի վստահէր ։ Եթէ իր վրայ պահէր դայն, ամբողջութիւնը կորսնցնելու վտանգին ենթարկած պիտի ըլլար ։ Վարանեցաւ այս կնճռոտութիւնը գուշակած չըլլալով ։ Ու պաղարկեցութիւնով ըսաւ .

— Աստուած իմ, աշխարհիս վրայ միս-մինակ եմ, ո՛չ ծնողք ունիմ և ոչ բարեկամ ։ Ձեռնարկած ճամբորդութիւնս . . . քիչ մը շտտ վտանգաւոր է ։ Ստացագիրս կրնայ ըլլալ որ կորսուի . . . փճանայ ։ Գործերը կանոնաւոր ըլլալու համար — որովհետեւ չենք գիտեր թէ պիտի ապրինք թէ պիտի մեռնինք — չէ՞ք կրնար այդ թուղթը քովերնիդ պահել, ձեր զբաղմունքներուն մէջ, այնպէս որ վերադարձիս անունս ըսելով ձեզի կամ ձեր յաջորդին, ընդունիմ ձեր քով ձգած առանդս ։

— Ծա'տ աղէկ, հաճեցէք անունիդ տալ ։

Ու ան առանց վարանելու պատասխանեց .

— Տիւլէրֆէ, Հանրի Տիւլէրֆէ ։

Երբ դուրս ելաւ, գոհունակութեան չունչ մը տուաւ ։ Իր ծրագրին առաջին մասը յաջողած էր ։ Հիմա կրնային զինքը ձերբակալել . իր դողօնը անկարելի էր ձեռք անցնել ։

« Բանտարկութեանս ժամանակամիջոցը լրանալէն ետքը, կրնամ փորանալ անոր, կ'եզրակացնէր ։ Չորս հինգ գէշ տարիներ անցընելէ ետքը՝ հարուստ պիտի ըլլամ ։ Ո՛չ ո՞ք պիտի կրնայ ուրանալ սեփականութեանս իրաւունքը ։ Ամբողջ կեանքիդ մէջ աշխատելէն աւելի աղէկ է ասիկա ։ Գիւղ մը պիտի քաջուիմ ։ Ամէնէն « Պարոն Տիւլէրֆէ » պիտի ճանչցուիմ ։ Խաղաղ կեանքով մը պիտի ծերանամ, ամէնուն բարիք ընելով, ամէնուն օգնելով, առանց խիղճի խայթ ունենալու » ։ Բնանըջորս ժամ ալ սպասեց, ապահովուելու համար որ, թղթադրամներուն թիւերը ծանօթ չէին ոչ մէկուն, և այս մասին բոլորովին վստահ արձակ համարձակ, սրկաւ բերանը՝ դնաց ինքզինքը ոստիկանութեան յանձնեց ։ Իր տեղը ուրիշ մը պատմութիւն մը պիտի յերկրէր . բայց ինք նախընտրեց ճամբորդութիւնը ըսել, իր գողութիւնը խոստովանիլ . ինչո՞ւ համար ժամանակ կորսնցնէր ։ Բայց ո՛չ հարցաքննիչ դատաւարին և ոչ ալ վճռարեկ ատենին առջեւ կրցան անոր բերնէն աւելի բառ մը աւելի ։ Գոհացաւ միայն սաչափ մը ըսել ։

— Ասկէ տակի բան մը չեմ գիտեր . նստարանի մը վրայ քունս տարաւ . . . ես ալ իմ կարգիս կողոպտուեցայ :

Ծնորհիւ իր սաջի օրինակելի կեանքին բաւականացան միայն հինգ տարի բռնադատութեան դատապարտել : Վճիռը ընդունեց , նոյն իսկ առանց յօնքերը պառտելու : Երեսունը հինգ ամիս էր . քառասունին ազատ ու հարուստ պիտի ըլլար : Այդ դատապարտութիւնը պզտիկ զոհողութիւն մը թուեցաւ իրեն , ապագայի այդ գիրքին հասնելու համար :

Կեղբոնականն բանտին մէջ , ուր իր պատիժը կը քաւէր , բռնադատեալներուն ամէնէն օրինակելին եղաւ , ինչպէս ամէնէն օրինակելին հանդիսացած էր պաշտօնեայ եղած տանը : Առանց անհամբերութեան , առանց յուզումի կը հետեւէր օրերուն թաւալումին , միայն իր առողջութեանը հոգ տանելով : Վերջապէս ազատ արձակուելուն օրը հասած էր : Իրեն յանձնեցին իր պզտիկ դուռնիքը—տասը ֆրանք : Անմիջապէս նստարանի գիմից : Այդ ժամը որքա՛ն երազած էր : Կ'երեւակայէր քիչ մը վերջը պարզուելիք տեսարանը : Մեծափառ թամ սրահ մը տաջնորդեցին զինքը : Նստարը պիտի ձանչնար արդեօք : Հայկիի մը մէջ ինքզինքը գիտեց : Իրաւ որ շատ ծերացած ու աւրուած էր . . . : Ո՛չ , նստարը պիտի չձանչնար զինքը վստահօրէն :

— Ի՞նչ կը փափաքիք , Պարոն :

— Ասկէ հինգ տարի առաջ ձեր քովը ձգած աւանդիս համար եկած եմ :

— Ի՞նչ աւանդ . . . Ի՞նչ անուանով ձգած էիք . . .

— Սա անուանովը , Պարոն . . . :

Թանկարժեք կեցաւ ու մրմնջեց .

— Սոսկալի բան է ասիկա , Բոլորովին մոռցած եմ այն անունը՝ որով ձեր քով աւանդը ձգեցի :

Փնտռեց , փնտռեց : Պարապ տեղը : Նստարանի մը վրայ նստաւ , ու զգալով յուզումին ազդեցութիւնը , ըսաւ ինքնիրեն .

— Հանդարտէ՛ . . . : Պարոն * * * Պարոն * * * Ի՞նչ գիրով կը սկսէր արդեօք . . . Աստուած իմ :

Ժամի մը չափ յիշողութեանը մէջ պրպտեց , նշան մը , հետք մը գտնելու յոյսով : Պարապ աշխատութիւն : Անունը իր շուրջը , իր առջեւ կը պարէր , անոր գիրերուն ցատկոտելը , վանկերուն փախչիլը կը տեսնէր իր աչքերուն առջեւէն : Ամէն վայրկեան լեզուին ծայրը կուգար , զայն գտնելու զգայութիւնը կ'ունենար : Ո՛չ , նախ ջլադրողում մը տուաւ ասիկա իրեն , յետոյ զրգոյն , ցաւազին , գրեթէ ջլալին ցաւ մը դարձաւ : Տաքութիւն մը կը բարձրանար կռակէն դէպի վեր : Միանները կը կծկուէին . չէր կրնար կեցած տեղը մնալ . բայց քանի՛ իր երեւակայութիւնը կը տանջէր , այնչափ անունը կը հեռանար իրմէ : Ոտքովը սկսաւ գետինը ծեծել . տեղէն յեղաւ ու ըսաւ . — « Ի՞նչ

օգուտ փնտռելը . . . պիտի չկարենամ գտնել , անոր վրայ չխորհիլ աւելի ազէկ է . ինքնիրենը պիտի գայ ան» : Զո՛ւր տեղը սկսաւ երկար բարակ անցորդները դիտել , ցուցափեղկերուն առջեւը կենալ , փողոցին ձայները մտիկ ընել : Մտիկ կ'ընէր՝ առանց լսելու , կը նայէր՝ առանց տեսնելու , մի'միայն սա հարցումէն հալածուած . «Պարո՞ն * * * Պարո՞ * * *» :

Գիշերը հետզհետէ կ'իջնէր : Սալայատակները տմայացան : Յոգնու- թեանն ընկճուած , պանդուկ մը գնաց , սենեակ մը վարձեց ու հազուա- ներով անկողինին վրայ նստեց ինքզինքը : Միշտ կը փնտռէր : Արշա- լոյսին , յոգնաբեկ , քնացաւ : Յորեկին արթնցաւ , երկարօրէն յորան- ջեց , գոհ , և յանկարծ վարկեան մը առաջուան անձկութիւնը զինքը պարագրկեց նորէն . «Պարո՞ն * * * Պարո՞ն * * *» :

Իր սրանեղութեանը վրայ նոր զգայութիւն մըն ալ կը բարդուէր . վախը : Այդ անունը երբեք չգտնելու վախը զինքը կը տանջէր : Տեղէն ելլելով դուրս ելաւ : Ժամերով սլքտաց նստարին տունին շուրջը : Երկրորդ անգամ ըլլալով գիշերը վրայ կոխեց : Եղունգները պանկին մէջը կը մխէր , հեծեծելով .

— Խենթեանիք բան է ասիկա :

Ահաբեկիչ գաղափար մը իր աչքերուն առջեւ կը կանգնէր : Երկու հարիւր հազար ֆրանքի թղթադրամ ունենալ , — երկու հարիւր հազար ֆրանք , թէեւ գէշ կերպով ձեռք ձգուած , — և չկարենալ անոր ար- րանալ . . . զայն իրեն սեփականացնելու համար հինգ տարի բանտար- կուած էր , և հիմա ձեռքէն կը խուսափէր . . . : Զեռքին ծայրը կը զգար այդ գումարը , և մէկ բառ մը , լոկ մէկ բա՛ռ մը , որ չէր ու- զեր գալ . . . կորսնցնել կու տար գումարը : Բռունցքով գլուխը կը ձեծէր : Բանականութիւնը կը կորսնցնէր , գլխովի մը պէս պատէ պատ- կը զարնուէր , լապտերներուն քսուելով : Անձկութիւն մը , ցաւ մը չէր ալ , կատաղութիւն մը եկած էր իր էութեանը , միտքին ու մարմինին վրայ : Այդ անունը չգտնալուն ստուգութիւնը զինքը • կը խեղճեցէր : Իրեն անանկ կու գար որ ձայն մը կը հեգնէր իր հասիւն , թէ անցորդ- ները զինքը մատով կը ցուցնէին :

Սկսաւ վազել պտտողներուն զարնուելով , կառքերէն ընաւ չզգու- չանալով : Պիտի ուղէր որ մէկը ձեռք վերցնէր հարուածելու զինքը , որպէս զի ինքն ալ իր կարգին կարենար զայն ձեծել , կամ ձի մը գե- տին տապալէր , կոխտէր • իր ցաւաւանջ մօրթը . . . «Պարո՞ն * * * Պարո՞ն * * *» :

Ուրերուն տակ տեսաւ խաժագոյն , մեղկ Սէնը՝ որ լուսաւորնե- րուն տակ կը պոպղար : Սկսաւ լալ : — «Պարո՞ն * * *» , — Ա՛հ , այդ անու- նը . . . այդ անունը . . . :

Գետեղերք առաջնորդող աստիճաններէն վար իջաւ և գետին վրայ հակեցաւ , ձեռքերը ու դէմքը զովացնելու համար : Կը հեւար . . . ևւ-

Ջուրը գէպի իրեն քաշեց . . . աչքերը . . . ակտիվները . . . ամբողջ մարմինը գրաւեց . իրանին սահիլը զգաց , չարմուժ չբրաւ՝ արգիլուելու համար և Ջուրին մէջը ինկաւ . . . : Յուրաքանչիւր խայթեց զինքը : Մաքառեցաւ , թևերը երկնցուց . . . գլուխը վեր բարձրացուց . . . աներեւութացաւ . . . Ջուրին երեսը ելաւ և յանկարծ յուսահատ ճիգով մը, տհալեկամ աչքերով ու պրկուած չրթունքներով , ռռնաց :

— Գտայ . . . օգնութիւն , օգնութիւն . . . Տիւ վերթէ էր . . . Տիւ . . .

. . . Բարախը ամայի էր : Ջուրը կամուրջին սիւները կը շոյէր : Անոր մօտ կամարը միայն այդ անունը արձագանգէր : Գետը ծուլօրէն կը վէտվէտէր ճերմակ ու կարմիր ցոլքեր կը կայթէին անոր վրայ . . . Աւելի մեծ ալիք մը լզեց եզերքը , չարունակական օղակաւորումներով . . . :

Ա.Մէն բան չուէր իման մէջ թաղուեցաւ . . .

ՍՕՐԻՍ ԼԵՎԷԼ-Ի

Ն. ՆԱԶԸՃԵԱՆ

Ա Ր Զ Ա Գ Ա Ն Գ

Տիար Հ. Բ. [Պոլիս].— Վերնագիրնիդ՝ «Իմ Մահը» , երկրորդ վերնագիրնիդ՝ «Մօրս Արտօսը» , ձօնենիդ՝ «Դուրեանին Յիշատակին» .—Օ՛հ , ի՞նչ գերագոյն դուրեանապաշտութիւն , որով գրաւուեր ու զինովցեր էք , մինչև զայն հոգեւին կապկերու աստիճան : Գերեւայ դեռ ուրիշ բան չէք կարկացած Դուրեանէն զատ , որ տիրած ըլլալ կ'երեւայ ձեր հոգիին , համագրաւիչ ազդեցութիւնով : Զէ՞ք գիտեր որ՝ մեռելարդր , մահաբաղձ լալօններու գրականութեան դամբանականը շատո՞նց կարդացուած է . և ինչո՞ւ այդ մարմաշը մեռելի ու մահուան խօսքերու , երբ դեռ ա՛յնչափ ծաղկատի էք , ինչպէս կը տեղեկացնէ ձեզ իր նամակով ներկայացնողը : Ի՞նչ անբուժելի վէրք խցած է ձեր սիրտը , ա՛յնչափ շուտ գերեզմանի տենչարու համար . Կեսնքի՛ն յտեցէք ձեր տկնարկը և ջանացէք կենդանի ու առողջ եղանակներ գեղցեղել . Կեսնքը ի՞նչ փայլուն ու արփաւէտ խոստումներ ունի՝ Եթէ ուզէք տեսնել . մահաբաղձ ձեր վանկը , թերեւս բռնագրօսիկ ու կեղծ , ծախելի ոչինչ ունի : Զգեցէ՛ք այդ գրականութիւնը , հինցա՛ւ . կը բաւէ՝ որչափ մշակուեցաւ ան : Զեզ ներկայացնողը կը գրէ . «Սկսեալները և նոր գրողները մի՛ ծաղրէք , մի քամահէ՛ք : Ինչպէս ծով մտնալով մարդ կ'ըլլայ լուրորդ , նոյնպէս գրական ասպարէզին մէջ գրիչ շարժելով կ'ըլլայ գրագետ» : Եթէ համակարծիք էք իրեն և այդ ըմբռնումով կը ներկայանաք մեզի , գիտցէ՛ք որ՝ թերթ մը , ինչպէս **Մասիս**ը , մանկապարտէզ չէ՛ : Գրելէ առաջ կարդացէ՛ք , աղէ՛կ հեղինակներ կարդացէք , կազմուելէ ետքը ճամբայ ելլելու համար , քանի որ դեռ ա՛յնչափ տկար , անկազմակերպ , տարորոշ ու մանկական է ձեր արուեստը , լեզուն , քերթողական կարողութիւնը : Բարե՛ւ ըրէք նաև ձեզ ներկայացնողին , ըսելով որ՝ գրականութիւն ընելը՝ «ծով մտնալով լուրորդ» ըլլալու պէս բան մը չէ՛ , գրականութեան ծովը տակը աստիճանով բաճիւր չունի և համբալի մը համար՝ ոտքը սահելով խղիւղի՛ն ալ կայ . . .

ԺՈՒԺ ՍԱՆ ԵՒ ՄԻՒՍԷ

Քսաներկու տարեկանին՝ Միւսէ, ճշմարիտ շխացած աղայ մը, շրջապատուած իր ծնողքէն և եղբոր մը զուգուրանքով, դեռ հազիւ քանի մը սիրային արկածներ ունեցած էր, և սակայն արդէն քառասուն տարեկան մարդու մը փորձառութիւնը, կրակածոտութիւնը և մարդասեղութիւնը ունէր։ Քսանը թըր տարեկանին՝ Ժոժ Սան, թող՝ Մօզիս աը Սարբի, որ իր երակներուն մէջ իշխանի և Պօնէմի արխըն կը զգար, իր ետին կը տեսներ իր բովանդակ հակասողիւր։ Իշխուած էր իր ընտանիքէն, իր ինչքերէն, իր օշական և իր երկու գլուխներէն։ Այլ զինքը պահելու մարդ չունենալով, զրական Պօնէմի կեանք մը կը վարէր, էրիկ-մարդու անտնով զուրա կ'եկէր, ինչպէս նաև էրիկ - մարդու տարագով, սիկստէթը շրթունքին և սակայն իր հոգիին խորութիւններուն մէջ միտախ էր, հանդարտ, բարի, զգայուն ամէն նոր բանի, կարծես թէ տակաւին երբեք խաբուած չըլլար։

Միւսէ այնչափ ինքնատիպ իր արուեստին մէջ և այնչափ անկանոն իր կեանքով, շատ մը տեսակէտներով ունէր այն գաղանի անձկամտութիւնը՝ որուն հնկամէտ են բոլոր մարդիկ, մասնաւորապէս անոնք որ իրենց ծնած օրէն իսկ նպատաւորուած են բուխտէն, որոնք կանուխէն լուս կրթութիւն մը ստացած են և որոնք կը վախճան ծաղրելի ըլլալէ։ Ժոժ Սան՝ ընդհակառակը՝ որ զուտ արուեստական տեսակէտով արտակարգ ո՛չ մէկ յատկութիւն ունէր, որ իր սեպին և զրական ոճին մէջ չընդգցաւ երբեք կոխուած ճամբաներէ, իզական իմացականութեան ճշմարիտ հրաշալիք մըն էր, զերծ ամէն նախապաշարումէ և Այն կիները որոնք հարկադրուած են մարդկային ընկերութեան վէրքերուն դպչիլ և որոնք ալ պէտք չունին իրենց աչքերը խոնարհեցնելու հանրային կարծիքին առջև, զրեթէ միշտ աւելի անկախ ոգի մը ունին, քան այլերը, որովհետեւ աւելի սուղ գնած են իրենց ազատութիւնը։ Ժոժ Սան կը բնէր և կը կռուէր ամէն բան և առհասարակ կրնար ճանչ-

նալ իւրաքանչիւր բանի ճշգրիտ արժէքը։ Ան չունէր Միւսէի բարձր մշակութիւնը։ Այդ տաք-զրուի արուեստագէտը աննդէլի, հատու և ճկուն բանականութիւն մը ունէր։ Ոչ մէկ մանուածապատ պարբերութիւն, ոչ մէկ ծուռ մտածում և տոտիւն շնորհ կը գտնէր իր բով։ Իբր կին, Ժոժ Սան միշտ պատրաստ էր ամէն բանէ առաջ սիրտի ծայնին ունկնդրելու և ազնիւ յնդրքով մը դիմուելու։ Ան չէր ըրձար երբեք ազնուապետական աշխարհին կողմէ փառաբանուած Մուսան ըլլալ։ Ընդհակառակը, կ'ուզէր մարտախումբի մը թմրահար աղջիկը ըլլալ։ Բայց որովհետեւ իր միտքը անկատար մշակութիւն մը ստացած էր, կ'ելլէր մինչև իբր արտասովոր էակներ յարգելու այն տեսակ մարդիկ՝ որոնք ուրիշ բան չունէին, եթէ ոչ տարօրինակ և շփոթ գաղափարներ, մասնաւորապէս սա խեղճ Բիէռ Լըռու՝ փիլիսոփան, որ այնչափ ճախարէր էր, բայց էտպէս այնչափ պարկեշտ և զոր իբր հայր կը նկատէր։

Իբր ազնուական Միւսէ ինքզինքը բարձր կը զգար այդ արտասովոր էակներէն՝ որոնք չէին գիտեր իսկ իրենց միտքը ուղիղ յայտնել։ Միւսէ Ժոժ Սան կը դիմուէր անոնց մեղրանոց խօսքերէն։ Ժոժ Սան վերջապէս, որ շատ մը տեսակէտներով անչափ զերպանց էր Միւսէէն, անկէ վար կը մնար իբր արուեստագէտ։ Իր արուեստական հանճարը զուրկ էր այն առնական ստեղծագործող ուժէն՝ որ կ'ըսէ հրամայողաբար. — «Այսպէս թող ըլլայ», առանց իր հրամանները պատճառաբանելու։ Երբ երկուքը պատկերի մը առջև կը գտնուէին, Միւսէ որ սակայն նկարագրութեան մասնաւոր զգացողութիւնը չունէր, անմիջապէս կ'ըմբռնէր անոր արժանիքը և կրնար քանի մը ճշգրիտ բառերով սահմանել զայն։ Ժոժ Սան ընդհակառակը երկար առնէ կը վարանէր և յաճախ տարտամ և առեղծուածային ձեւով մը կը յայտնէր իր կարծիքը։ Երբ մէկտեղ օրեւա մը մտիկ ընէին, Միւսէ կիրքի պրոնկումներէն և արուեստագէտի ինքնատիպութենէն կը տպաւորուէր։ Իսկ Ժոժ Սան աւելի կը հրապուրուէր խմբերգներու երգէն, խաղին տիեզերական հանգամանքէն։ Պէտք էր որ իր միտքը կերպով մը շփումի մէջ գտնուէր ուրիշներու հետ, որպէս զի ինքն ալ շարժէր։

իր վէպերը խիստ երկարաբան էին, մինչ Միսէի իւրաքանչիւր պարբերութիւնը կը նմանէր յղիւած ոսկիի կտորի մը :

Ինչհաւան ընդունած ատեն՝ Միսէ անմիջապէս մատիտով մը առաջին էջերէն բռնեւեռն էջ աւելորդաբանութիւններ ջնջեց, աւելի վերջը ժողով Սան Նորէն տեսաւ զիրքը և կ'ըսէն թէ՝ աւելի զայրացաւ, քան շնորհասարտ մնաց : Միսէի հետ տեսնուելէ իբր վեց ամիս առաջ ժողով Սան զրեմէ՝ վախցած էր տնոր հետ ծանօթանալէ : Նոյն Սէնդ-Պէօվէն խնդրած էր որ զայն իրեն ներկայացնէ, բայց 1833 մարտին գրած նամակի մը «Յետ գրութեան» մէջ կ'ըսէ. «Ամէն բան լաւ մը նկատողութեան առնելէ ետքը՝ չեմ ուզեր որ ինծի բերէր ներկայացնէր Ալֆրէտ տը Միսէն, ան խիստ պէնամով է. հետը չախտի համաձայնիւր. կը փախաբէի ճանչնալ զայն, բայց աւելի հետաքրքրութենէ քան թէ համակրութենէ մղուած, և պէտք չէ գոհացնել ամէն հետաքրքրութիւն» : Այս բառերուն մէջ տարտամ և խորհրդաւոր երկիւղ մը կը մատնուէր : Միսէ ալ, իր մասին, ինչպէս բոլոր գրագէտները, կը փախնար զրոյ կիներէն և կը փախչէր անոնցմէ : Տարակոյս չկայ թէ՝ «կապոյտ գուլպայ» (bas-bleu) յորջորջումը, որով կը կոչուէին այս կարգի կիները, այս պաշտօնակիցի մը կողմէ տրուած էր իրենց. սակայն անվիճելի է թէ՝ իգական գերազանց միտք մը զօրաւոր հրապոյր մը կ'ազդէ արական միտքի մը վրայ : Տարբեր սեռէ երկու միտքերու փոխադարձ խորունկ հասկացողութենէն ծնած յափշտակութիւնը՝ այս պարագային ամեցաւ յոնկարծական հրայրքով մը : Եթէ պատմական տեսակէտով նկատողութեան առնենք Միսէի և ժողով Սանի յարաբերութիւնները, նոյն աչքի կը զարնէ թէ՝ անոնք ո՛րչափ կրօնք են ժամանակին ոգին և արուեստական գինովութեան ազդեցութիւնը, զինովութիւն մը որ տիրած էր Ֆրանսայի բոլոր միտքերուն, վիպական շրջանին մէջ : Հանճարի տէր արուեստագէտներ՝ որոնք իրենց առաջին պարտականութիւնը կը նկատեն անցեալին հետ ամէն յարաբերութիւն իւրը տրուեստի տեսակէտով, յանձնա կը փորձուին նաև խիզախել ընկերային սովորութիւններու դէմ : Բայց

1830ի սերունդը տիրող հետեւադասական գէմ իր ըմբոստացումին մէջ, աւելի եռանդուն, աւելի ամենի էր, քան ուրիշ որ և է սերունդ նախընթաց պարբերութեան :

Իւրաքանչիւր արուեստագէտի մէջ Պօնէմ մը կամ մանուկ մը կայ. մանուսնդ Պօնէմի և մանուկի ձեւով է որ վիպական արուեստագէտները կ'երեւան մեզի : Խիստ հետաքրքրական իրողութիւն մըն է թէ՝ Միսէ և ժողով Սան իրար զանելէ և իրենց յափշտակութեան առաջին ժամերէն անմիջապէս ետքը, համոյք կը զգան ծախելով և իրենց բարեկամները խաբելով : Երբ Բօլ տը Միսէ առաջին անգամ երկկողմի մը հրապարակեցաւ նոր ամուսին կողմէ, տեսաւ որ Ալֆրէտ հագուած և շարժուած է տասնըութերորդ դարու մը մարքիի պէս և ժողով Սան Ատրիէնի փոխաւ տնայնակի ֆուլաւով մը : Իրենց մտերմական յարաբերութիւնը հասարակ կողմ մըն ալ ունեցաւ, որ շատ ծանօթ է : Ամէնքն ալ զիտեն թէ երկուքը մէկ իտալիա ճամբորդեցին, թէ Միսէ՝ ժողով Սանը տառապեցուց իր նախանձութիւնով, թէ ժողով Սան ալ փոխարէն խիստ հակողութեան մը ենթարկեց Միսէն, թէ իրենց կենսակցութիւնը երջանիկ չեղաւ, թէ ժողով Սան խաբեց Միսէն երբ ան հիւանդ էր և թէ Միսէ Ֆրանսա դարձաւ բոլորովին ընկճուած. բայց այս կապակցութիւնը ուրիշ աւելի հետաքրքրական կողմ մը ունի, հոգեբանական և գեղագիտական : Գրականութեան ընդհանուր պատմութեան մէջ կան շատ մը միութիւններ՝ ստղանդաւոր այբերու և կիներու միջև : Սակայն ժողով Սանի և Միսէի սերտ յարաբերութիւնը միւս բոլորէն կը զանազանուի մասնաւոր հանգամանքով մը : Այս բանին մէջ առաջին կարգի արական հանճար մըն է ան, որ արդէն կտրած է իր արուեստագէտի ստալտեզին մէկ մասը և որ աակայն տակաւին երիտասարդ է. միւս կողմէ՝ իգական հանճար մը, ա՛յնչափ ճոխ, ա՛յնչափ ընդարձակ, որչափ չէր ունեցած կիներ մինչև ան ատեն. և այս երկուքը իրարու վրայ կը ներգործեն խորունկ ազդեցութիւն մը իրենց սէրին յափշտակութեան մէջ : Առաջին անգամ ըլլալով պատմութեան ընթացքին մէջ իրարու կը հանդիպէին տարբեր սեռէ երկու բանաստեղծական հոգիներ, և

իրենց կատարեալ փժժութիւն մէջ : Արուեստին Աղամ Եւան էին որ մէկտեղ կը բաղէին Գիտութեան Ժառանգի պատգը : Յետոյ տեղի ունեցաւ բաժանումը , խզումը և իւրաքանչիւրը իր ճամբան գնաց մինակ , բայց բոլորովին փոխուած : Իրենց վերջին զործերը ապացոյցներ կը ներկայացնէին տոկաւին իրենց փոխադարձ ազդեցութեան : Միւսէ կը հեռանայ մտմտած , յուսահատած , խաբուած , նոր զանգառով մը զինուած իգական սեռին դէմ և իր հողիւր հանգուած թէ՛ Կինը ուրիշ բան չէ , և թէ ոչ Կեդրիք : Ժոժ Սան Միւսէն կը բաժնուի խորունկ ցաւով մը , մորմաբաժ ի՛նք ալ , բայց կէս մը միխթաւուած և զո՞ն ո՞ր այդ խառնալից շրջանը ապրեցաւ , հաստատուած սոս համոզումին մէջ թէ՛ Կինը գերազանց է Այրէն և թէ Էրիկ-մարդը ուրիշ բան չէ , և թէ ոչ տկարութիւն :

Ժոժ Սանէն բաժնուած առին Միւսէ նորէն արհաւիրմանը կը զգայ բոլոր ցնդաւան և մարդկայնական երազանքներու համար , ամէն առնէն աւելի համոզուած թէ՛ Արուեստը արուեստագէտին միակ մասնագումբները պէ՛տք է ըլլայ . զայց այդ իգական մեծ հողին հետ հարգողակցելով իր տաղանդը առաւելացած էր . նախ ցաւը անկեղծ դարձուց զինքը . հրաժարեցաւ իր ետամուկեանէն , կեղծ կարծաւորութեանէն :

Յետոյ Ժոժ Սանի անկեղծութեան , անոր բարութեան , խաղաղին համար՝ անոր ունեցած խանդավառութեան ազդեցութիւնը յայտնուեցաւ իր հետագայ զործերուն մէջ :

Ժոժ Սան իր կողմէ զայն կը լքէ , ալ աւելի համոզուած թէ՛ այդ մարդը էապէս սահմանափակ է և ետամուկ , եւ արամազրուած է ինքզինքը մեծ գաղափարներու նուիրելու : Բայց Միւսէին բով յաճախելով է որ՝ անոր դասական ոճին անբժուծիւնը տեսաւ , քանի որ Միւսէին լեզուն ա՛յնչափ պայծառ էր և ա՛յնչափ յստակ : Անոր միջոցով սորվեցաւ սիրել ձեւը և գեղեցիկը վնասել զգեցողութեան համար , և երբ Տիւմա Որդի կ'ըսէ թէ Ժոժ Սանի մէկ պարբերութիւնը «Լէճնառաւը Վինչիի կողմէ նկարուած և Մօցարդի կողմէ երգուած» կը թափ , պէտք է աւելցնել թէ՛ Միւսէի քննադատութիւնէն է որ անոր ձեւը վարած և իր ականջը մարգած է :

Իրենց բաժանումի միջոցին երկուքն ալ իրենց արուեստագէտի հասունութեան հասած են : Միւսէ անկէ ետքը հրակէզ սիրտով բաժնուեցին է . Ժոժ Սան աստուածաշունչ պատգամախօսն է : Այս վայրկեանէն սկսելով Ժոժ Սան հրաժարեցաւ իր յիմարական ըմբռնութենէն , իր երբեմն տարօրինակ ոճէն , իր արական հագուստէն , կին մը զառնալու համար : Իսկ Միւսէ իր կողմէ ձգեց Տօն Ժուսնի տարազը , Ռօլլանի համար ունեցած հիացումը , իր տղայական յոխորտանքը , մա՛րդ մը և իմացականութիւն մը զառնալու համար :

ԿԷՈՐԿ ՊՐԱՆՏԷՍ

ՔԱՏԵՐԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՅՔ

Վաղը , կիրակի , Բերա , Վառիթմէ Թատրոնին մէջ , տեղի պիտի ունենայ Թատերական ցերեկայթ մը , ծանօթ կատակերգակ Ե . Թօլայեանի նպատին , Օսմ . նորակազմ Թատերական խումբին կողմէ : «Թօլայեան նպատ» Ասիկա արդէն բաւական խոտունալից է՝ փայլուն ու շքեղ ցերեկայթի մը վստահութիւնը ներշնչելու համար , դատելով իր նախորդ տարուան «Նպատ»էն : Միւս կողմէ , յայտագիրը՝ մէկն է ամէնէն հրապուրիչներէն . հաճելի պէսպիսութիւններ՝ մեծագէտ հրապուրիչ կը դարձնեն զայն :

Կը բաւէ միայն Թուել . — «Միւսիւրաբ-լառ» , զաւեշտ , մասնակցութիւնով Տիկին Հէքիմեանի , Ֆէհիմ Էֆ.ի , Թօլայեանի : — «Տիւրան Տիւրան» , երեք արարուած , մասնակցութիւնով խումբին բոլոր անդամներուն : — Տիկին Մինեմ Վիթիլի՝ իր զուարթ շանւօնէքներու «ռէքէպուսա»ին մէջ : — Պարուհի Տիկին Ն . Շաւէթթի՝ բօ-բուռի-թօ-լա» պարին մէջ : — Իտալացի Թէնօ Պրե . Ա . Շարէթթի Ֆաուսթին . Քաւմէնէն , Բակչիալիէն կտորներով : — Նուագախումբ . : 76 հոգի , 5 մասերու բաժնուած յայտագիրով մը , ամէնքն ալ հրապուրիչ ու առինքնոր : Ամէնը մէկ , — վայրկեան մը Թօլայեանի սիրական ձեւով մը խօսելու համար , — հաճոյք ու խնդրել :

Կը մնայ միայն , վաղը փութալ Թատրոն :

ՍԻՆԵՔՆԵՐԻՄ ԷՖ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Ծանօթ վանական և Առեւտրական Սենեակի խորհրդական անդամ Սինեքերիմ ԷՖ. Մուրատյանի մահովը, որ տեղի ունեցաւ շաբաթու, Բերալի իր բնակարանին մէջ, կ'անհետանայ համայնքէն կարեւոր դէմք մը, որչափ իբր առեւտրական ձեռնհաս ու ձեռներեց անձ, նույնչափ իբր արդիւնալից աշխատար Ազգ. վարչական գործերու մէջ : Ինք մէկը եղած է կանուխէն Պոլիս եկող Կեսարիական, և իր գործունեայ նկարագիրով, ձեռներեց ոգիով, յաջողած է ինքնօգնութեան կորովի դժուր՝ ստաշանալ առեւտրական սապարէզին մէջ, գրաւելով կարեւոր դիրք մը և վալյուն անուն մը : Մասնակցած է նաեւ Ազգ. վարչական գործերու, իբր անդամ Պատրիարքարանի ժողովներուն ու Խորհուրդներուն, Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան, պատեօսներ՝ զորս վարած է մեծ յաջողութիւնով և օրինակելի արդիւնաւորութիւնով : Բացառիկ կարով մը, ձեռնհասութիւն մը և յաջողութիւն մը ցոյց տուած է իր ստանձնած պատեօսներուն մէջ, զորս զլուխ հանած է արժանաւորապէս, միշտ Ազգին երակսինը պատրաստելով : Յուղարկաւորութեան շնորհ հանդէպ կատարուեցաւ Բերալի Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ, ճեղկալով ինքնով Հայ եւ օտար բազմաթիւ ծանօթ ականաւոր անձնաւորութիւններու : Կը հախազանք Ս. Պատրիարք, իր շուրջը ունենալով եպիսկոպոսներ, վարդապետներ և եկեղեցիին բանակայական դասը : Դասին մէջ սգակիր կեցած էին հանգուցեալին մօտաւոր ազգականներէն շատեր, աղջկէր և երկու հարսեր : Ս. Պատրիարքին արտասանած դամբանականէն ետք, դազադը հանդիսաւոր բալիօրով հանուեցաւ սանաւէն և դրուելով մեռելակառք՝ փոխադրուեցաւ Շիւշիի Ազգ. Գերեզմանատունը, ուր մարմինը ամփոփուեցաւ ընտանեկան դամբարանին մէջ : Երեկաները իրենց ցաւակցութիւնը յայտնեցին հանգուցեալին Տիկինին, զակին, հարսերուն, Մանուկեան ընտանիքին : Մեր ցաւակցութիւնները հանգուցեալին ընտանեկան պարագաներուն :

ՏԻԳՐԱՆ ԷՖ. ԵՈՒՍՈՒՑԵԱՆ

Վերջին պահուն ցաւով կ'արձանագրենք նաեւ մահը Տիգրան ԷՖ. Եուսուճեանի, Դեր-Ասեմապէտ հախարդ Վարչութեան : Ինք դէմք մըն էր մեր համայնքին մէջ, իր գործած մասնակցութիւնովը Պատրիարքարանի ժողովներու, Խորհուրդներու և Յանձնաժողովներու : Իր Եուսուճեան ծանօթ ընտանիքէն և ուսումը առած Բարիկ, ճեշեւելով առեւտրական գիտութիւններու : Պոլիս դառնալէն ետք պէտական ծառայութեան մէջ մնած է և իր սապարէզին մէջ բարձրանալով՝ անգն հալցած է Վնուսիկ Ասեմանին : Վերջերս շատ ցարացած էր և Շիւշիի իր բնակարանին մէջ բժիշկներու խիստ հակողութեան տակ կ'անցընէր կեանքը : Քանի մը օր առաջ քոխասալի եկրարկուեցաւ, որուն չիրմալով դիմադրել, կնկեց մահկանացուն : Մարմինը փոխադրուած է Բերալի Ս. Երրորդութիւն եկեղեցին, ուր երկուշաբթի օր կը կատարուի յուղարկաւորութիւնը :

§ Ամանորի առիթով Բերալի Էստեան Վարժարանին մէջ սահմանած հանդէպին մասին՝ անգլիէժնական Մօնիթթօն օրաթերքը յիշատակութիւնը կ'ընէ երկու ուսանողութիւններու, որոնք յաջող նուազանքութիւններ քրած են, դառնալով և շնորհակալ : Այդ երկու օրիորդները՝ Եւսիկէ Հանեան և Սիւզան Պօռնակեան, ներկաներուն զնահասութիւն արժանացած են երաժշտական իրենց յաջողութեան համար :

§ Կիլիկիայի Կաթողիկոսական Աթոռին մասնակարարութեան 1904 տարիի Էլմական Հաւուցեցոյցը, — հրատարակութեան տրուած Աթոռին Քարտուղար-Հաւուսակալ Դիւս Վարդապետէ, — կը ցուցնէ թէ Մայրաքաղաքէ՝ ճոյն տարուան մէջ ունեցած է 193,205 դր. և Էլեմուսք մը, ուր 38,549ը հասարակ առաւելութիւն կը մնայ :

ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆ [ԲԻԼԹԻԻՊ ՀԱՆԵՒ ԷՏԷՊ]

Կեանք էֆ. Տէյրովէնճեան, որ գրաւածագական և տպագրական գործերու մէջ երկարամասնակեայ փորձառութիւն ստացած է, այս անգամ Պապը Ալի Ճատովէի ձեռքաւ Օղլու փողոցը նոր գրատուն մը հաստատած է՝ «Բիլթուդանէի էսէպ» անունով, ուր կը ծախուին թուրք., Հայ. և Զրառ. գիրքեր: Կը տպագրուին քամպիալ, նամակի և պահարանի գլուխներ, մահազդներ, հարսանեկան հրաւիրագիրներ, այցաքարդեր և այլն: Կը կազմուին՝ խնամուած կերպով ամէն տեսակ՝ գիրքեր և լրագիրքի հաւաքածոներ և այլն:

Խիս դիւրամասշէլի պայմաններով

Անոնք որ այս գրատունին հետ գործ ունենան, փորձով պիտի համոզուին Տէյրովէնճեան էֆ.ի ճշգրտահութեան և յանձնարարութիւններուն արագ ու ճշգրիտ գործադրութեան:

ԾԱՂԻԿ տղոց չարաթաթերթ. — Կը հրատարակուի տղոց և դպրոցականներու յատուկ նիւթերով, Սադայեան խնամուած տպագրութիւնով: Տարեկան բաժանորդագրութիւնն է 30 դր. : Տնօրէն՝ Սադայեան: Հասցէ՝ Ղալաթիա, Գուրչուկու կամ, թիւ 7, ուր տէտք է ուղղել նամակ, բաժանորդագիր կամ որ և է գրութիւն:

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Ծանօթ տառամարութ խաչիկ էֆ. Ժամկոչեան՝ պատիւը ունեցած է անդլիացի տիկինէ մը ստանալու հետեւեալ նամակը.

Սիրելի Տէր. —

Շնորհապարտ եմ Ձեզի որ՝ Սկալտիոյ և Մատաչուսէթի մէջ տարիներով դարձանել տալ չկրցած տկոսներս՝ հիմնադէս բուժել յաջողեցաք:

Տիկին ԱՆՆԷԹԱ ՄԱՅԼՍ

ՄԱՐԳԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ

Աշխատակից՝ ՏՕԳԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Այս հատորը՝ դիւրահասկնալի լեզուով և կղանակով ծանօթութիւն կու տայ մարդկային մարմնին կանգնածութեաւ և անողջապահութեանը վրայ: Զերմադէս յանձնարարելի է ամէն ընտանիքի՝ և ամէն անհատի, քանի որ մարմնական առողջութիւնը առաջին պայմանն է կեանքի երջանկութեան: Կազանդի առիթով մանաւանդ յարմարագոյն նուէրը՝ իր մաքուր տպագրութեամբ, բաղմաթիւ պատկերներով և ընտիր կազմով: Վաւերացուած է Ուսումն. Խորհուրդէն՝ իբր դասագիրք բարձրագոյն և լրացուցիչ դասընթացներու ուսանողներու: Գինը 10 դրոշ: Կեդրոնատեղի՝ Յ. Մատթէոսեան թղթալտնառատուն, Ամերիգան կամ, Կ. Պոլիս:

ՀԱՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Հեղինակներէ և հրատարակիչներէ անոնք՝ որ կը բաղձան Մասիսի մէջ ծանուցուիլը իրենց հրատարակութեան, պէտք է մոռնան մեր պայմանը թէ, Ձ օրինակ գրկուած գիրքերը միայն նկատողութեան կ'առնուին և կը ծանուցուին :

ԱՐԵՒԵԼՔ ԾՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղսֆալսն .— Բա-
ժանորդագրութիւն Կ. Պոլսոյ համար՝ տարեկան 80, վեցամսեայ 45
ՂՐԶ, գաւառներու համար՝ տարեկան 108 ՂՐԶ, վեցամսեայ 60 ՂՐԶ,
և օտար երկիրներու համար՝ տարեկան 35 Ֆր. վեցամսեայ 20
Ֆր. : Զեռքէ վաճառու՝ ճաշը փարս : ԱՐԵՒԵԼՔ հրատարակ
կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ըն-
տիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :
ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխա-
տակիցներով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին
մէջ, արժանացած՝ բնթերցողներու գնահատմանը : Իր առաւելութիւններէն
մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՆԴՈՒՄ հանգամանքը, որով իր բնթերցողնե-
րուն կը ներկայացնէ պարբերաբար Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տե-
սարաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուած-
ները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, եր-
կրագործական, իրաւաբանական և այլն, բացի գրական, բանասիրա-
կան գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ևն : ԱՐԵՒԵԼՔ վերաբերեալ
ամէն գրութիւն և բաժանորդագիրն ուղղել Տէր և Տնօրէն Փառեգին
էֆ. Պոլսականի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր կը
գտնուին թերթին Տպարանը և Խմբագրատունը :



Je prends tous les jours
de la vraie
CRÈME DE MORUE
de la Ph^{ie} PEQUART de VERDUN-s/-Meuse
C'est très bon!!!
Petite mère, se méfie des produits
similaires; mauvais et digérant mal.
Le Flacon : 3^{fr} 50 dans l^{es} Pharm^{ies}.

Նշանաւոր Տօքթ. Բէքառի
այս Էմիւլսիօնը կը գերա-
զանցէ հրապարակի վրայ
դտնուած բոլոր իր նմանե-
րը : Զուգի իւրի տեղ կը գոր-
ծածուի և անկէ աւելի
օգուտ ունի աղոց և տկար

« SUPERIEURE à L'HUILE de FOIE de MORUE et aux EMULSIONS. »
անձերու : Միակ ներկայացուցիչ Թուրքիոյ . Ո. Սօլախեանց, Կ. Պոլիս :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՐԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարձանէ ամէն տե-
սակ ակռայի և լինաի հիւանդութիւնները, փոսած ակռաները կը լեցնէ՝
առողջ ակռաներու պէս երկար առեն դործածուելու պայմանով :

ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նուրբ, ճաշկաւոր և դիմացկուն
արուեստական ակռաներ կը պատրաստէ, բնականին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարձանատան մէջ, Բերա, Մեծ
Բարձաք-Փառու, Թիւ 8 : Կարօտ հիւանդները ճրի կը դարձանէ հինգ-
շաբթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարմանատունին մէջ :

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունին :

ՄԻԱՄԻՏԻ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Գեղեցիկ տպագրութիւնով, գեղարուեստական կողքով, զրական հրատարակչ ներքինով: Օրուան գիրքը և ամէնէն խօսուած հրատարակութիւնը: Էջ 280: Գինը՝ 7 զրշ.: Կեդրոնատեղ՝ Սթամպոլ, Շիրին խան, թիւ 7, Օննիկ և Ընիկ: Կը գտնուի ամէն գրավաճառի քով:

ԳՐԱՏՈՒՆ ՀԱՊԷՇԵԱՆ. ԱՄՍՍԱՍ: Ամասիայի և չրջականե-

րու գրական պէտքերուն լիուլի գոհացում տալու համար է որ հիմնուած է այս նոր դրատունը, ուր գիտակից խնամքով կը պատրաստուին տրուած բոլոր յանձնարարութիւնները: Մասնաւորապէս յանձնարարելի է այս գրատունը բոլոր ուսուցիչներուն ու գրասէրներուն, իբր միակ կեդրոնատեղ լաւագոյն գասագիրքերու և լաւագոյն հրատարակութիւններու:

ՄԱՆԶՈՒՄԷ Միակ առտուան Հայաթերթը, կը հրատարակուի արշալոյսին, և առտուն խիստ կանուխ՝ կը գտնուի Պոլիսի և արուարձաններու ամէն կողմը, բովանդակելով հետաքրքիր, քաղաքական, ներքին, եկեղեցական ու կրթական լուրեր, գրական, տնտեսական և ընկերային յօդուածներ: Զորեքշաբթի և չաբաթ օրերը կը հրատարակուի առանց ծանուցումի, չորրորդ էջը յատկացնելով առեւտրական և գրական գրուածքներու: Գինն է 10 փարա: Տարեկան բաժանորդագրութիւնն է Պոլիս՝ 80 զրշ., գաւառ՝ 108, արտասահման՝ 25 ֆր.: Վեցամսեայ՝ Պոլիս՝ 50, գաւառ՝ 60, արտասահման՝ 18 ֆր.: Ամէն գրութիւն ուղղել Տէր և Տնօրէն Յովհաննէս Ֆ. էֆ. Գայսէրեանի հասցէին՝ 38, Պապը Ալի Ճատտէսի:

Դպրոցներու համար անհրաժեշտ

Դասակնէակներու համար կարեւոր

«Սալօն»ներու համար գեղեցկագոյն զարդը՝

ՀԱՅԵՐԷՆ ԵՐԿՐԱԳՈՒՆՏԸ

Հրատարակելու՝ վաւերացուած Հանր. Կրթութեան նախարարութիւնէն: Վարժարաններու վարիչներուն, բոլոր ընտանիքի հայրերուն և հայ վաճառականներուն կը յանձնարարուի մէյ մէկ հատ գնել այս կարեւոր և գեղեցիկ զարդէն: Գինն է չրջանակով 85, առանց չրջանակի 65 զրշ. գաւառներու համար՝ իբր սնտուկի և փոխագրութեան ծախք 15 զրշ. աւելի Դիմիլ՝ Պապը Ալի Ճատտէսի, թիւ 56, Յովհ. էֆ. Ազնաւորի «Օսմանլը» Դրատունը:

Երգ. ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՑՈՒՅԱՀԱՆԴԷՍ «ՍԻՆԿԷՐԻ»

Բերա, Մեծ-Փողոց, Թ. 343, Ա. Յարկ

Ամէն օր բաց է

Մ Ո Ւ Տ Բ Ը Զ Ր Ի

Ա. Կարգի մրցանակ հետեւեալ ցուցանդէսներէն. Բարիզ 1900, Սեն-Լուի 1904, Շիլան 1906, Պրուսս 1906:

“ՄԱՍԻՍ,,Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՅԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և գաւառներու համար տօնական 60 դրչ.:

Արտատաշմանի » » 14 ֆրանք:

Թղթատարութեան ծախքը մեր վրայ:

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգևները:

միշտ ձրիարար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ:

Մանիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կախիկ է:

Դրամ կարելի է ղրկել փոխանակելով, օտմանեան կամ

օտար ղնանա-փոսթով և օտմ. թղթատարական նամակագրոշ-

մով, 20 հատը մէկ մէծիտի հաշիւով:

Զննաարական և ձեռագիրները եւ չեն զտրուիր:

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ,,Ի Հասցէով

Պապը Ա.Լի ճուսէսի, Թիւ 38

درعليه باب عالی جاده سنده نومرو ۳۸ «مسیس» غزتهی ادارهخانهی

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

“ՄԱՍԻՍ,,Ի Նոր Շրջանի Ա. Տարիի հաւաքածոն, որ 1000 էջէ բաղկացած գրական գեղեցիկ հասր մը կը կազմէ, հրնայ ստացուիլ խմբագրութեան, կանխիկ փոխար- ժէքով՝ 60 դր. . կազմուած 65: Թղթատարով ղրկուելիք Հասրներու համար պէտք է 5 դր. աւելի վճարել:

Պ. ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԻՆ ՄԷՋ

Կը գտնուի Կաղանդի նուէրի համար ընտրեղագոյն ղրքերու ճոխ մթերք մը, որմէ կ'արժէ որ օգտուին ծնողքներ: Դեղեցիկ ընտրու- թիւներ են մանաւանդ՝ նորատիպ ստուար գործը ողբացեալ գրագէ- տին՝ Յ. Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ:

ԴՊՐՈՅ ԵՒ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Արժէքաւոր ու մատենագրարանի ղարդ բլլալու սահմանուած

գեղեցիկ հատոր մը]

ԴՈՒՆ ՊԵՏԻ ԸԼԼԱՍ՝ ԴԱԽԹ ԽԱԶԿՈՆՅ-Ի

[Օգտաւէտ հատոր մը ազոց համար]

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ՝ Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ-Ի

[Հրահանգիչ, ղրտեսցուցիչ և հետաքրքրական]:

Եւ ուրիշներ, ղորս տեսնելու համար՝ պէտք է առիթ կորսնցնել՝ այցելելու Պալենց Գրատունը: